բոքն Իւրեանց (!) հալածեաց ի դիւահարեալ կնոջէ, քեռ անտեսին մերոյ, ի մատուռն դպրատան մեր Հռովմայ։ Զարմանալի էր քահանայս այս մեծա-հաւատ և յոյժ խոնարհ, որ մինչեւ ցայժմ զ45 դիւահարս ազատեալ էր։

1704· ՌՃԾԳ· Սվէտքն յետ հարկանելոյ զԱքսոնս, սկսանին զԼեհաստան հարկիւք կողոպտել· գան ի Լէօպոլիս, և զի քաղաքացիքն ոչ զհարկս կամեցան տալ և ոչ ի ներքս մտանել թոյլ ետուն, մատնութեամբ ոմանց առին զքաղաքն, սեպտեմ. 6· և իբրեւ զերիս ժամս աւար առին· ապա զդրամս 200,000 դալերաց ի քաղաքացեացն, յարքեպիսկոպոսացն և յամենայն եկեղեցեաց բռնութեամբ առին· ուստի և աթոռական եկեղեցին Հայոց զբազում սկիհս, զխաչս և զայլ արծաթի կահս՝ ետուն փոխանակ դրամոց։ Իսկ յետ չուելոյն անտի Շվետաց՝ ժանտամահ մեծ անկաւ ի քաղաքն Լէօպոլիս, յորմէ 10,000 հոգիք կորեան· նոյն մահն և յայլ մերձաւոր տեղիս սփռեցաւ։

1736· ՌՃԶԵ· Ծանեայ զոմն (քսան ամք են) իբր զնուիրակ, որ զսուրբ մեռոնն՝ աշխարհականաց գնահատեալ էր ի Պոլսոյն, և յայլ քաղաքս՝ նոքօք Պուղտանաց առաքեաց։ — Բայց լռել ոչ կարեմ զանօրէն արարն Կիրակոս վարդապետին, որ երկուք ամօք յառաջ ի քաղաքին, ի մէջ եկեղեցւոյն առաջի ժողովրդեանն՝ զխորհրդատեր մի ծիւ ծիւ արարեալ այրեաց, և կողիւքն զգլուխ քահանայի միոյ ծեծեաց։ Գարշելի է ինձ զայսպիսեաց գրելն, բայց գանգատքն ոչ տան թոյլ (1)։

1· Ռոշքեանն զայս գրած է ի թղթին առ Աբրահամ Գ կաթողիկոս, ի 10 մարտի, 1736։